

Կազմված է 2015 թ. հունիսի 25-ին
Բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ»
փակ բաժնետիրական ընկերության
2015 թվականի հունիսի 25-ին կայացրած
արտահերթ ընդհանուր ժողովի
թիվ 2015/06/25 արձանագրությամբ

Գլխավոր գործադիր տնօրեն՝

_____ Պապ Բաղայան
2015 թ. հունիսի 25-ը

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից 21.12.1995 թ.
Գրանցման համար՝ 269.130.01032
Վկայականի համար՝ 01Ա021114
ՀՎՀՀ՝ 02201344
նոր վկայականի համար՝ 03Ա084248

թիվ _____ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից

_____ 2015 թ.

«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. Ընկերության կանոնադրության 2.1.-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Ընկերության կանոնադրական կապիտալը 5,464,000,000 (հինգ միլիարդ չորս հարյուր վաթսուներորս միլիոն) ՀՀ դրամ է: Այն բաղկացած է 478,100 (չորս հարյուր յոթանասուներեք հազար մեկ հարյուր) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է և 68,300 (վաթսուներեք հազար երեք հարյուր) հատ հաստատագրված շահութաբաժնով, կումուլատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսերից, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:»

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է Ընկերության գրանցված կանոնադրության (նոր խմբագրությամբ) անբաժանելի մասը և ուժի մեջ է նրա հետ միասին:

30.03.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում են «ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը**

2015թ-ի մարտի 26-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2015թ-ի ապրիլի 6-ին, ժամը 12:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Ընկերության 2014 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման համար աուդիտորական երեք թեկնածու ընկերություններից որոշվեց ընտրել Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ-ն և այն ներկայացնել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:
2. Ընկերության հայտարարված 200,000.0 հատ հասարակ անվանական բաժնետոմսերից 150,000.0 հատի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը և Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կարգի ու պայմանների հաստատումը և ժողովին ներկայացումը.

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման հիմնական շարժառիթը Ընկերության և ՎԶԵԲ-ի միջև 2014թ-ի հոկտեմբերի 9-ին ստորագրված պայմանների ամփոփագրի (Term Sheet) շրջանակներում նախատեսված 23.8 մլն ԱՄՆ դոլարի պրոյեկտի 2-րդ փուլի 10.0 մլն ԱՄՆ դոլարի մի մասն է (բացվածքները կցվում են): Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացվելու է լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսերի փակ բաժանորդագրությամբ տեղաբաշխման միջոցով: Լրացուցիչ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը կազմելու է 150,000.0 հատ հասարակ անվանական բաժնետոմս, իսկ դրանց անվանական արժեքի ընդհանուր գումարը՝ 1,500,000,000.0 ՀՀ դրամ:

Ներդրման աղբյուրը	Գումարը մլն USD
1-ին փուլ	
ՎՋԵԲ-ից վերաֆինանսավորում	7.3
HSBC Հայաստան բանկից վերաֆին.	5.0
Համահայկական Բանկի վարկ	1.5
Ընդամենը	13.8
1-ին փուլ	
ՎՋԵԲ-ից վարկ	2.0
HSBC Հայաստան բանկից վարկ	2.0
Կանոնադր. կապիտալի համալրում Սամվել Բեգլարյանից	3.0
Կանոնադր. կապիտալի համալրում ՎՋԵԲ-ից	3.0
Ընդամենը	10.0
Ընդհանուրը	23.8

2-րդ փուլ	Գումարը մլն	
	հատ	USD
Գիպսոնիտի արտադրման հոսքագիծ	1	6.200
Պեռլիտի արտադրման հոսքագիծ	1	0.440
Տրանսպ. միջոցներ բլոկների արտադրական միավորման համար	10	0.300
Տրանսպ. միջոցներ վերջնական արտադրանքի դիստրիբուցիայի համար՝ ներկեր, չոր շաղախներ	10	0.300
Բետոնի արտադրության գործարանի վերանորոգում և արդիականացում	1	0.160
Տրանսպ. միջոցներ հանքի տարածքում գիպսե հանքաքարերի տեղափոխման համար	7	0.500
Տրանսպ. միջոցներ գիպսի ցեմենտի գործարաններ տեղափոխման համար	10	0.700
Հատուկ մեքենաներ պատերի և առաստաղների համար	20	0.250
Բեռնող մեքենա հանքի ներսում կիրառելու համար	1	0.180
Էքսկավատոր CAT330D	1	0.350
Աղաց և ջարդիչ	1	0.200
Չնախատեսված ծախսեր		0.420
		10.000

09.04.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում են «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

2015թ-ի ապրիլի 06-ին տեղի ունեցավ բաժնետերերի ժողով, որի ընթացքում հաստատվեցին 2015թ-ի մարտի 26-ին տնօրենների խորհրդի որոշմամբ ընդունված բոլոր հարցերը: Բաժնետերերի ժողովի էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Թողարկել և տեղաբաշխել 1 500 000 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարային անվանական արժեքով լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսեր: Կանոնադրական կապիտալի ավելացման հիմնական շարժառիթն է Ընկերության և ՎՋԵԲ-ի միջև 2014թ-ի հոկտեմբերի 9-ին ստորագրված պայմանագրով (Term Sheet) Ընկերության կողմից ստանձնված պարտավորությունների կատարումը:
2. Հաստատվեց Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կարգն ու պայմանները:
3. Հաշվի առնելով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ պայմանավորված Ընկերության կանոնադրության փոփոխությունների անհրաժեշտությունը, որոշվեց ի գիտություն ընդունել Ընկերության կանոնադրության փոփոխությունների նախագիծը:
4. Հաստատվեց Ընկերության 2014 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման համար Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ-ի թեկնածությունը:

06.05.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում են «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

2015թ-ի ապրիլի 30-ին ժամը 18:00 տեղի ունեցավ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2015թ-ի մայիսի 11-ին, ժամը 12:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Ամփոփելով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները տնօրենների խորհուրդը արձանագրեց, որ Ընկերության բաժնետերերը, բացառությամբ բաժնետեր Սամվել Բեգլարյանից, հրաժարվել են Բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրենց իրավունքից (առկա է բաժնետերերի գրավոր հրաժարականը):

Ընկերության բաժնետեր Սամվել Բեգլարյանը Բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իր իրավունքից օգտվել է մասնակիորեն. իրեն հասանելիք 149,893.0 հասարակ անվանական բաժնետոմսերի փոխարեն ձեռք է բերել 143,100.0 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր՝ 10,000.0 դրամ անվանական արժեքով:

Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Ընկերության համալրված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը կազմեց 4 781 000 000 (335 000 x 10 000 + 143 100 x 10 000) ՀՀ դրամ:

2. Հաշվի առնելով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները, և հետագայում՝ ՎՋԵԲ-ի հետ ստորագրված պայմանագրով նախատեսված արտոնյալ բաժնետոմսերի թողարկման հնարավորությունը, որոշվեց ի գիտություն ընդունել Ընկերության կանոնադրության փոփոխությունների նախագիծը և ներկայացնել բաժնետերերի ժողովին հաստատման (կանոնադրության փոփոխության նախագիծը կցվում է):

ՆԱԽԱԳԻԾ

Կազմված է __.05.2015թ. և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 02.05.2015թ.-ի որոշմամբ,
Արձանագրություն թիվ 2015/05/02

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
կողմից 21.12.1995թ.

գրանցման համար՝ 269.130.01032

վկայականի համար՝ 01 Ա 021114

հարկ վճարողի հաշվառման համար՝ 02201344

նոր վկայականի համար՝ 03Ա084248

թիվ _____ փոփոխությունը գրանցած է

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից

_____ մայիսի 2015թ.-ին

Գլխավոր գործադիր տնօրեն՝

Պ. Բաղայան

ստորագրություն

__ մայիսի 2015թ.

Պետական ռեգիստրի տարածքային բաժնի ղեկավար՝

«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ»

փակ բաժնետիրական ընկերության

կանոնադրության փոփոխություններ

1. Ընկերության կանոնադրության 2.1.-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Ընկերության կանոնադրական կապիտալը 4,781,000,000 (չորս միլիարդ յոթ հարյուր ութսունմեկ միլիոն) ՀՀ դրամ է, որը կազմում է 478,100 (չորս հարյուր յոթանասունույթ հազար մեկհարյուր) հատ տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ է: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:»

2. *Ընկերության կանոնադրության 2.2.-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.*

«2.2. Ընկերության հայտարարված հասարակ անվանական բաժնետոմսերի քանակը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) հատ բաժնետոմս: Ընկերության հայտարարված արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 68,300 (վաթսուներեք հազար երեք հարյուր) հատ բաժնետոմս: Արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ է:»

3. *Ընկերության կանոնադրության 3.4.-րդ կետում ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.*

«Ընկերության հայտարարված արտոնյալ բաժնետոմսերը՝ հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսեր են, որոնց ընդհանուր անվանական արժեքը կազմում է 683,000,000 (վեց հարյուր ութսուներեք միլիոն) ՀՀ դրամ: Ընկերության հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսերով ամրագրված իրավունքները սահմանվում են այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով, որը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Ընկերության կողմից տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսերն իրավունք են տալիս դրանց սեփականատերերին ստանալ հաստատագրված շահութաբաժին, որի տարեկան չափը կազմում է 1050 (մեկ հազար հիսուն) ՀՀ դրամ: Այն ենթակա է վճարման յուրաքանչյուր ֆինանսական տարվա մայիս ամսվա վերջին աշխատանքային օրը՝ սկսած տեղաբաշխման տարվան հաջորդող տարվանից, և ենթակա է ճշտորտման՝ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով սահմանված կարգով: Հաստատագրված շահութաբաժինները կումուլյատիվ շահութաբաժիններ են: Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ կամ մասնակի չվճարած շահութաբաժինը կուտակվում և վճարվում է հետագայում: Ի հավելումը հաստատագրված շահութաբաժինների՝ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ նաև հասարակ բաժնետոմսերի դիմաց հայտարարված շահութաբաժինների 12.5 տոկոսը: Ընկերության կողմից տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսերի մարման գինը սահմանվում է այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով: Ընկերության կողմից տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը կազմում է այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և հայտարարված ու չվճարված շահութաբաժինների հանրագումարը:»

4. *Սույն փոփոխությունը հանդիսանում է Ընկերության գրանցված կանոնադրության (նոր խմբագրությամբ) անբաժանելի մասը և ուժի մեջ է նրա հետ միասին:*

14.05.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը**

2015թ-ի մայիսի 11-ին տեղի ունեցավ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի ընթացքում ընդունված էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում հաստատվեց Ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը և սահմանվեց, որ Ընկերության կանոնադրական կապիտալը 4,781,000,000 (չորս միլիարդ յոթ հարյուր ութսունմեկ միլիոն) ՀՀ դրամ է, որը կազմում է 478,100 (չորս հարյուր յոթանասունութ հազար մեկ հարյուր) հատ տեղաբաշխված հասարակ անվանական բաժնետոմս, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ է:
2. Հաշվի առնելով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները, և հետագայում՝ ՎԶԵԲ-ի հետ ստորագրված պայմանագրով նախատեսված արտոնյալ բաժնետոմսերի թողարկման հնարավորությունը՝ հաստատվել է կանոնադրության փոփոխությունների նախագիծը (կից ներկայացվում է կանոնադրական կապիտալի փոփոխության պատճեն՝ գրանցվա՝ պետական ռեգիստրով):

20.05.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

2015թ-ի մայիսի 20-ին «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) վճարեց 2013թ-ի նոյեմբերի 20-ին թողարկած 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 40000 հատ ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի երրորդ տոկոսագումարը (105,945,026.33 դրամ)՝ ընդհանուր թվով 30 իրավաբանական և ֆիզիկական անձանց:

22.05.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում են «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

2015թ-ի մայիսի 19-ին ժամը 12:00 տեղի ունեցավ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեց որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2015թ-ի մայիսի 30-ին, ժամը 12:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումը ներկայացվում է ստորև.

Հաշվի առնելով ՎՋԵԲ-ի հետ ներդրման և վարկային պայմանագրի ստորագրման աշխատանքների ավարտին հասնելու գործընթացը, որոշվեց Ընկերության և ՎՋԵԲ-ի միջև 2014թ-ի հոկտեմբերի 9-ին ստորագրված պայմանագրի (Term Sheet) պահանջներին համապատասխան բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացնել 68,300.0 հատ 10,000.0 դրամ անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսերի թողարկումը և տեղաբաշխումը, որը վերը նշված պայմանագրի համաձայն առաջարկվելու է ՎՋԵԲ-ին:

02.06.15թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում եմ «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի ղեկավար անձնակազմում տեղի են ունեցել փոփոխություններ. մասնավորապես՝

1. Ընկերության աուդիտոր Արմեն Բալասանյանը նշանակվել է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ - ներքին աուդիտոր.
2. Ընկերության արտերկրից գնումների վարչության պետ Արման Բաբաջանյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից և նշանակվել է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ – լոգիստիկայի վարչության պետ.
3. Ընկերության Ռազմավարական զարգացման վարչության պետ Աննա Վարդանյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից և նշանակվել է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ – արտաքին կապերի և ներմուծման վարչության պետ:
4. Ֆինանսական տնօրեն Սերգեյ Դուրախանյանը, ով հանդիսանում էր «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ում «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձ, ազատվել է զբաղեցրած պաշտոնից և նշանակվել է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ - ֆինանսական տնօրեն:

15.06.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում են «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

2015թ-ի հունիսի 15-ին ժամը 18:00 տեղի ունեցավ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեց որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2015թ-ի հունիսի 25-ին, ժամը 12:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումը ներկայացվում է ստորև.

1. Հաշվի առնելով որ ՎԶԵԲ-ը արտոնյալ բաժնետոմսերի (68,300.0 հաս 10,000.0 դրամ անվանական արժեքով, 20,600.0 դրամ տեղաբաշխման (վաճառքի) նվազագույն գնով, 1,050 դրամ տարեկան շահութաբաժնի չափով), վճարման հանձնարարականի կատարման օր է նշանակել 2015թ-ի հունիսի 24-ը, տնօրենների խորհուրդը որոշեց 2015թ-ի հունիսի 25-ին, ժամը 10:00-ին տնօրենների խորհրդով ամփոփել արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և 2015թ-ի հունիսի 25-ին ժամը 12:00 ներկայացնել ժողովի հաստատմանը: Նշեմ, որ Ընկերության բոլոր բաժնետերերը պատշաճ ձևով ծանուցվել են Արտոնյալ Բաժնետոմսերի տեղաբաշխման և դրանց նկատմամբ իրենց նախապատվության իրավունքի մասին և գրավոր ձևով հրաժարվել են իրենց նախապատվության իրավունքից:

2. Թողարկվող Արտոնյալ Բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կկազմի 5,464,000,000 (հինգ միլիարդ չորս հարյուր վաթսուինչորս միլիոն) ՀՀ դրամ:

3. Հաշվի առնելով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ պայմանավորված Ընկերության կանոնադրության փոփոխությունների անհրաժեշտությունը՝ որոշվեց բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացնել Ընկերության կանոնադրության փոփոխությունների նախագիծը:

4. Որոշվել է տարեկան ժողովի օրակարգը:

5. Հաշվի առնելով առաջիկա 3 ամիսների ընթացքում Ընկերության կողմից կատարվելիք խոշոր ներդրումները, որոնց իրականացման համար անհրաժեշտ են ազատ դրամական միջոցներ, որոշվել է տարեկան շահաբաժինների վճարման հարցը հետաձգել մինչև 3 ամիս:

30.06.15թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում են «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

2015թ-ի հունիսի 25-ին տեղի ունեցավ բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովներ, որի ընթացքում ընդունված էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում հաստատվեց Ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը և սահմանվեց, որ Ընկերության կանոնադրական կապիտալը 5,464,000,000.00 դրամ է, որը բաղկացած է 478,100.0 հատ տեղաբաշխված հասարակ անվանական բաժնետոմսերից և 68,300.0 հատ տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսերից, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը 10,000 դրամ է:

2. Հաշվի առնելով արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հաստատվեց կանոնադրության փոփոխությունները (կցվում է):

3. Հաստատվեց Ընկերության 2014 թվականի տարեկան հաշվետվության (ներառյալ արտաքին աուդիտորի և Ընկերության վերստուգողի եզրակացությունները):

4. Հաշվի առնելով առաջիկա 3 ամիսների ընթացքում Ընկերության կողմից կատարվելիք խոշոր ներդրումները, որոնց իրականացման համար անհրաժեշտ են ազատ դրամական միջոցներ, որոշվեց տարեկան շահաբաժինների վճարման հարցը հետաձգել մինչև 3 ամիս:

10.12.15թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում են «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը

2015թ-ի դեկտեմբերի 07-ին ժամը 10:00 տեղի ունեցավ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեց որոշ հարցեր, որոնցից էականները ներկայացվում են ստորև:

Ընկերության գործարար ծրագրերի ֆինանսավորման նպատակով (ընթացիկ վարկերի վերաֆինանսավորում, կրեդիտորական պարտքերի վճարում և հոլմքերի կանխավճարներ)՝ մինչև 2015թ-ի տարեվերջ թողարկել՝

- 50,000 (հիսուն հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմս, յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով), եկամտաբերությունը՝ տարեկան 11%, շրջանառության ժամկետը՝ 60 ամիս,
- 25,000 (քսանհինգ հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմս, յուրաքանչյուրը 10000 (տաս հազար) ՀՀ դրամ դոլար անվանական արժեքով), եկամտաբերությունը՝ տարեկան 17.5%, շրջանառության ժամկետը՝ 60 ամիս:

Հաստատվեց Ընկերության ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կարգն ու պայմանները: